ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 75

«23» 09 2022 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 44 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Արմեն Աֆանդյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ 23.09.2022թ. N 342-Ա հրամանը՝ ելնելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալների միջև աշխատանքի հավասարաչափ բաժանում և ծանրաբեռնվածություն ապահովելու անհրաժեշտությունից, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով

Հրամայում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի, նրա տեղակալների և գլխավոր դատախազության ավագ դատախազների, դատախազների միջև աշխատանքի բաժանում կատարելու ու Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 10-ի N 28 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ 2019 թվականի սեպտեմբերի 25-ի N 44 հրամանի (այսուհետ՝ Հրաման) 1-ին կետի 2-րդ ենթակետը ճանաչել ուժը կորցրած:

2 Հրամանի 1-ին կետի 4-րդ ենթակետում ավելացնել նոր պարբերություններ՝ հետևյալ խմբագրությամբ.

«զ. համակարգում և վերահսկում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության աշխատանքները, ինչպես նաև այս ոլորտում Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրության 11-րդ կետով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված գործառույթների իրականացումը, բացառությամբ Հայաստանի

Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում և ազգային անվտանգության ծառայությունում քննվող գործերի,

է. համակարգում և վերահսկում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության աշխատանքները, ինչպես նաև պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտը,

ը. համակարգում և վերահսկում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության աշխատանքները, ինչպես նաև այս ոլորտում Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրության 11-րդ կետով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված գործառույթների իրականացումը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում և ազգային անվտանգության ծառայությունում քննվող գործերի,

թ. համակարգում և վերահսկում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության աշխատանքները, ինչպես նաև այս ոլորտում Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրության 11-րդ կետով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված գործառույթների իրականացումը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում և ազգային անվտանգության ծառայությունում քննվող գործերի,

ժ. համակարգում է քաղաքացիական պաշտպանության ոլորտին վերաբերող հարցերը:»:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազին և դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ